


ԹԻՎ 45
3/5
NEW

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուկարիոյ համար
Տարեկան ֆր. 10
վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրանք 12
վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հարաւոր օրերը: Ծա-
նոցման տողը 10 Սանդիմ: Երկու ք/ւ ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Սանդիմ:
Զհրատարակուած գրութիւնը եւ յօդոյթը:

Հասցէ
DIREAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

ԶԵՒՆԻ ԸՍԵՐ

Անխառն գոհունակութիւն մը կը
զգայ մարդ, երբ իր աշխատութիւնը կը
տեսնէ արդիւնաւորուած ու պտղաբեր-
ուած:

Այսպիսի գոհունակ տպաւորութիւն
մը կրցնինք այս շաբթու, երբ իմա-
ցանք թէ տեղացի մէկ քանի երիտա-
սարդներ, տնչուշտ մեր յաճախակի դի-
տողութիւններէն ու յորդորներէն խը-
րախուսուած, առաջարկած են տեղւոյս
Թաղ. Խորհրդոյն բանկալի մատակարա-
րութեան հոգը ստանձնել և արդիւնա-
ւորել զայն. ասոր արդիւնքը սա եղած
է որ առաջին կիրակին բանկալի հա-
սոյթը զգալի բարձրացում մը կրած է,
իւր 40 ֆրանք:

Երբ այս խնդիրը առաջին անգամ
կը յուզէինք «Հայեւի»ի էջերուն մէջ,
չէինք ըսեր որ մեծ բարեփոխում մը
պիտի կրէ եկեղեցւոյն հասոյթը, եթէ
փոխան աշկերտի մը, պատկառելի ու

պատուաւոր անձեր անցնին զործին
գլուխը:

Ահա՛ տպացոյցը:

Կը լսենք թէ, հակառակ եկեղե-
ցական օրինաց, որ բացարձակապէս
կարգիլէ ապաշխարութեան (պահք) օ-
րերը Պսակի արարողութիւն կատարել,
և հակառակ աւագերէցի կողմէ եղած
պատուէրին, տեղւոյս դադիթական տէր
Գէորգ հանրածանօթ քահանան այս շո-
րեքշաբթի ցորէկին պատկազրութիւն
մը կատարեւ է:

Տեսնենք, այս անգամ ի՞նչ պիտի
տնօրինէ եկեղեցական իշխանութիւնը:

ՊՈՒՐԿԱԶ

Կաթողիկոսական այցելու հովիւ Գեոր-
գ Ա. Արսէն Վ. Վեհունի, որ Օրմանեան Ս.
Պատրիարքի կողմէ ընդունած հրաւերին
համաձայն Պ. Լրկաշ գացած էր տեղւոյն
աղգայնոց մէջ տիրած երկպառակու-
թեան վերջ մը տալու համար, իւր այս
պաշտօնը կատարելով երեքշաբթի օրը
վերադարձաւ ի Վառնա:

Պուրկազի նորընտիր Թաղ խորհուրդը կազմուած է հետեւեալ ուղղափառներէ .

Տիարք

Յակոբ Փափազեան Ատենապետ
Միքայէլ Խըպէյեան Ատենադպիր
Յովհան Պօթանճեան Գանձապահ
Մ. Յակոբ Տէմիրճիպաշեան Անդամ
Միհրան Կրիսեփ
Մուշեղ Աւագեան
Աւետիս Գրիգորեան

Վերակազմեալ Հոգաբարձութիւն

Յովհաննէս Երամեան Ատենապետ
Յակոբ Փափազեան Ատենադպիր
Յակոբ Տէմիրճիպաշեան Գանձ.
Յակոբ Սարգիսեան Անդամ

Կը շնորհաւորենք ու կար և զօրութիւն կը մաղթենք :

Հինգշաբթի առտու, Վարդանանց զօրավարաց տօնին առթիւ Կաթայեցելու հովիւ Գեր. Արսէն Վարդապետ հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց տեղւոյս Ս. Սարգիս եկեղեցւոյն մէջ, ուր այս առթիւ հոծ բաղմութիւն մը հաւաքուած էր երկսեռ ազգայիններու :

Պատարագի աւարտումէն ետքը, եկեղեցւոյ պարտէզին մէջ կատարուեցաւ Վարդանանց ազգային հանդէսն ալ, բանախօսութիւններ եղան և երգեր երգուեցան : Բայց ցաւալի է ըսել որ, մինչ հայր Սուրբը իր բանախօսութեան էն ազգու մասին հասած էր, ահա գըպրոցին վերի յարկին մէջ հաւաքուած մէկ քանի պարոններ ու օրիորդներ պատահաններէ վար կախուած, ոմանք հոյ և ոմանք ալ ախիթ ուտելով կը սկսին բարձրաձայն խնդալ ու աղմուկ հանել իրարու կրթնած, այնպէս որ ժողովուրդը կարծելով թէ նոր տեսարան մըն

ալ վերը կայ, վեր նայիլ կը սի հետաքրքրութեամբ :

Ասիկա պարզապէս լրբութիւն մէ, մանաւանդ անանկ օր մը, ուր ամենէն սկեպտիկ մարդն անգամ երկիւղած լրբութիւն ու ջերմեւանդութիւն պէտք է ունենայ :

Նոյն հինգշաբթի գիշերը ի նպատակ տեղւոյս երկսեռ վարժարանաց, Անկէլ Սլավօֆի թատերասրահին մէջ տեղի ունեցաւ «Մեծն Վարդան» ողբերգութիւնը : սրահը լի էր երկսեռ հանդիսականներու հոծ բաղմութեամբ :

Հասոյթը գոհացուցիչ է :

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԸ

Տեղւոյս աղքատախնամ ընկերութեան վարչական ժողովը պաշտօնապէս կիմացնէ թէ, թողապետութենէն եկած երկրորդ հրամանագրով մը ստիպուած է իր գործառնութիւնները դադարեցնել առժամանակեայ կերպով, ուստի կը խընդրէ որ դիմումներու վերջ տրուին մինչև ցնոր տնօրէնութիւն :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ

Այսօրուան թղթարկելով.

Կ. Պալոյ Դատական նախարարութենէն Պատրիարքարան ղրկուած պաշտօնագիր մը նայաւ Իրատէի մը համաձայն կը ծանուցանէ թէ անցեալները դադարած անձերէն անոնք որ Պալոյ մէջ տուն, ընտանիք և գործ ունին, կարող են վերադառնալ, իրենց մասին Պատրիարքարանի կողմէ ապահովութիւն տրուելով եւ երաշխաւոր ցուցուելով : Այսչափ ատենէ ի վեր սպասուած ներու մը այս ըլլալու է :

Լոնտոնէն ու Նիւ Եօքէն մեզ ղրկուած նամակներուն միանգամ ընդ միշտ կը պատասխանենք թէ, իբր նմոյշ մէկէ աւելի թերթ չենք կրնար ղրկել : Մանիֆաթուրայի խանութ բացած չենք :

Նախակ խմբագրութեան

Վառնա 10 փետրվար 98

... Խմբագիր,

Յանուն անկողմնակալութեան հաճեցէք ներկայս հրատարակել:

Յայտնի է թէ տեղոյս գաղթական կարօտեալ հայուհիներու նպաստելու նըպատակով հիւանդանոցի շէնքին մէջ հաստատուած է արուեստանոց մը, որուն վարչութիւնը յանձնուած է նոյնպէս հայ օրիւրդի մը հսկողութեան: Օրիորդ Քրայզերի միկնումէն ետքը այդ արուեստանոցին մէջ գործուած զեղծումները ասկէ առաջ տեղական թերթերու մէջ արդէն հրատարակուեցան: Ցաւալի է որ նոյն բարոյական զեղծումները դեռ կը շարունակուին ի վնասայդ բարենպաստակ հաստատութեան մէջ աշխատող անկեալ և կարօտեալ գաղթական օրիորդներու:

Այդ թշուառներէ շատերը, ճակատագրական զոհեր, անէծքներ կը տեղան միշտ այդ հաստատութեան տեսչութիւնն ստանձնող խղճահար (.) օրիորդին դէմ, որ ձեռքն անցած տռիթէն օգտուելով, կը կեղեքէ իր հոգածու խնամատարութեան յանձնուած թշուառ գաղթական հայուհիներն:

Իրեն տրուած իշխանութիւնը չարաչար դործածելով այսպէս, ընդհանուրին դժգոհութեան աւրիթ տալէ զատ, կը վնասէ նըպատի մարդասիրական գործին: Հաստատութիւնը լաւ համբաւ չի վայելեր, շնորհիւ իր խելացի տեսչուհւոյն, որուն միակ փափաքն է կարծես չարաշահել խեղճ գողթականներու որոշ դասակարգ մը, որ ըստիպուած է այսօր իր ձեռքի աշխատութիւններովը օրուան հացը հայթայթել: Ամենէն ամարդի ու կոշտ վարմունքներով կը դառնացնէ անոնց բազմաչափաբար ու վշտաբեկ սիրտը, որոնք յառաժգանութեան, գերմարդկային ճիգերով կուրծք կուտան ամեն անսակ նիւթական ու բարոյական զրկումներու

և աշխատութեամբ կը պահեն իրենց չարքաշ կեանքը:

Ար յուսանք թէ այս դիտողութեանց վրայ ղեկավար տեսչուհին այլևս պիտի զգուշանայ սոյն կարգի կարօտեալներու վնասելէ, որոնք աւելի պէտք ունին վեհանձն ու փափկանկատ ձեռնտուութեան մը:

Այս անգամ՝ այսչափ:

ԵՐՈՒԱՆԴ ՓԷՇՏՄԱԼՃԵԱՆ

Հայերի — Առաջին անգամը չէ որ յիշեալ տեսչուհիի նկատմամբ քանդատներ կը լսուին, ու ի՞նչ վերագրեալ տողերը ճիշդ են, բարենիշ մը իրեն:

Ար լսենք թէ հաստատութեան մը մէջ, ուր գաղթական շքանոր օրիորդներ պլտիկ օրականներով կ'աշխատին, ցորեկը ճաշի ատեն երբ այս խեղճերը հետերնին բերած չոր պանիր հացը ուտելու կը սկսին, տեսչուհին ալ անոնց դէմը անցած՝ խայտախորհի՜մք գառայի՜մ կուտէ և զեր:

Երեսը ճերմակ կենայ:

195 ՀՈԳԻ ՍՃՈՒՄԾ

Տարօրինակ լուրերու տարի մը եղաւ այս տարին: Դարերէ 'ի վեր տեղի չունեցած բնական երևոյթներ սկսան կատարուիլ այրեցեալ գօտիին տակ: Ասոնցմէ մին էր այս տաշուան Եգիպտոսի ձմեռը, որուն վրայ խօսեցանք անցեալ թուով. երկրորդն է Պաղտատի անօրինակ ձմեռը, ուր վերջերս շատ ձիւն տեղալով, ջերմաչափը զերօէն 5 աստիճան վար իջեր է: Խորասան գաւառակի Կախա անապատին մէջ 200 հոգիէ բաղկացեալ կարաւան մը ձեան փոթորկի բռնուելով, 195 հոգի իրենց հեծած անասուններովը սառեր են:

Շրջակայքը բնակող զանազան ցեղերուն անասունք կորեր են ցուրտին սաստկութենէն:

Հիմա կը վախցուի որ այսչափ ձիւն եթէ հալին, գարնան Տիգրիս և Եփրատ գետերը չափէն աւելի յորդին:

ԶԱՆԱԶԱՆՔ

ԱՀՈՒԵԼԻ ՎԱԽՃԱՆ

ԱՀԱԳԻՆ ՀԱՅԿԵՐՈՅԹԻ ՄԸ

Քոյորատոյի (Մ. Նահանգք) Տէնվըր քաղաքին մօտ վայրագութեան տեսարաններ տեղի ունեցան այս օրերս : Ամերիկացի 1,500 գլխաւոր զուարթոյժներ (կով, եզ, գոմէշ, ոչխար պահող, աճեցնող և վաճառողներ) հիւր եղած էին Տէնվըր քաղաքին ու լաւ ընդունելութիւն գտած . հետեւապէս որոշեցին 12,000 հոգիի ձրի ճաշ մը տալ, առատ մսով, ձուկով, կարկանդակով և քաղաքէն դուրս հաճելի դաշտավայր մը : Բայց փոխանակ 12,000 հոգիի, առանց ո՛ր և է հրաւերի կամ՝ կարգադրութեան սպասելու, 30,000 հոգի խուժեցին սեղաններուն վրայ : Ոստիկանք և զինուորք չկրցին ամբողջ զըսպել, մանաւանդ որ չտեսութեան առաջին օրինակն իրենք տուին . որոշեալ ժամէն առաջ ուտելու եւ խմելու սկսելով : Անոնք որ ամենէն ուժով էին, առաջ անցան եւ սկսան ճաշակել : Գուարարոյժներուն պատուիրակներն եւ քաղաքին երեւելեաց զաւակներն որք հիւրամեծարութիւն պիտի ընէին, չկրցան սեղաններուն մօտենալ : Ետեւ մնացողներուն բերնին ջուրերը կը վազէր, տեսնելով որ առաջ անցնողները կ'ուտեն կը յագենան եւ կ'արբենան, մինչ իրենք երբեք բախտ պիտի չունենան մերձենալու : Հետեւապէս, ընդհանուր հրմշտուէ մը սկսաւ որ փոխուեցաւ կռիւի, եւ կռիւին հետեւանքն այն եղաւ որ շատ մը այրեր, կիներ, տղաքներ կոխտեցան, եւ ուտելիքներուն ամենամեծ մասը փճացաւ . (Մոսքուա խոտինսքոյի հրապարակին արկածին տեսակ մը կրկնութիւնը) : Կատաղած կոչնականք, եղան մի խորոված ահագին կտորներն իրարու դիմու կը նետէին, դոյլերու մէջ գարեջուր լեցնելով զիրար կ'ողղէին, դանակներն ու պատառաքողներն

իրարու կը նետէին, մինչեւ որ ընդհանուր խառնակութեան մէջ տեղ սեղանները կտոր կտոր եղան, հացերն ու կերակուրներն ոտից կոխան եղան, եւ շատ մը վիրաւորներն հիւանդանոց փոխադրուեցան :

ԿԱՆԱՅԲ

— Ի՞նչ բանի վրայ կը մտածեն կանայք :

Այս հարցման անգղիական հանդէս մը սա պատասխանները կը հրատարակէ :

Չորս տարեկան եղած տաններն, շաքարեղէններու վրայ կը մտածեն : Իօթը տարեկանին՝ իրենց սիրական պէպէքին վրայ :

Երբ տասներեք տարու կըլլան, իրենց հասակակից գողցեմը արդէն իսկ միտքերին կը գրաւէ :

Տասներութ տարեկան հասակնուն մէջ՝ վիպական ամուսնութիւն մը կերպարներ :

Քսանըմէկին՝ իրենց առաջին զաւակը կընդնշմարեն :

Երեսունը հինգին՝ կը տիրին իրենց առաջին սպիտակ մազը տեսնելով :

Քառասունին՝ կը մաքառին իրենց երեսին կանխահաս խորշոմներուն դէմ :

Յիսուն տարեկան եղած տաններն, անցեալը կը յիշեն :

Վաթսունին, ա՛լ իրենց թոռներով միայն կը զբաղին :

ԳԼԽԱՐԿԻ ՓԵՏՈՒՐ

Եւրոպայի մէջ կանացի գլխարկները 300 միլիոն ֆրանքի թուշուն կը սպառեն :

Անգղիական տուն մը միայն ամեն տարի իրարու վրայ 400,000 մեղուահաւ (աւրը գուշու), 5,000 զրախտահաւ և 500,000 հատ տարբեր թռչուններ բերել կուտայ որոնց միտուրները կանացի գլխարկները կը զարդարեն :

Անցեալ տարի Լանտոնցի վաճառական մը 800,000 թռչուն ծախած է, որոնք բերել տուած էր շնչկաստանէն և Պրէզիլէն :

Այս հաշիւները կապացուցանէ թէ կին արարածները կարծուածին չափ անօգուտ էակներ չեն գոնէ... փետուրի վաճառականներուն համար:

ԽԱՐՈՒԱԾ ԱԿՆՑԻՆ

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊՔ Ի Կ. ՊՈԼԻՍ)

ԴԻՍԻՍ ԺԵ
ՈՐՈՇՈՒՄ

Աւելորդ կը համարինք Պատրիկի ու տիկին Միհրանի նոյն գիշերուան խորհրդակցութիւնը մանրամասնաբար նկարագրել. սաչափը կըսենք թէ գրագիրը իր ձեռնարկին մէջ յաջողած էր: Այս հնարագետ երիտասարդը՝ երկու օրիորդներուն — Բուրմինէի և Սրբուհիի — հետ ալ զատ զատ խորհրդակցելէ ետքը, քիչ մը յօգնութիւն աչք առնելով՝ ասանկ հարուստ մարդու մը հետ հաստատուելիք խնամութեան օգուտները թուեր ու այս մասին յաջողելու համար ընտրած յատկապիժը անոնց պարզեր էր: Իր առաջարկը թէ՛ տիկին Միհրանի եւ թէ՛ օրիորդաց միաձայն հաւանութեանը արժանաւարով, անոնցմէ խօսք առած էր մինչեւ վերջը իր հրահանգներուն հետեւի, առանց որ եւ է գիտողութեան: Ու հետեւեալ առաւօտ երբ Պոյաճի գիւղէն կը մեկնէր, գոհունակութեամբ մը կըսէր ինքն իրեն.

— Է՛յ Աստիւր աղա, վերջապէս պիտի տեսնես որ Ակնցին կը խաբուի՞ թէ չի խաբուիր:

Երկու շաբաթներ անցան: Այն միջոցին Աստիւր աղա Գուրու-չէշմէէն գէպի Արնավուտ գիւղ տանող ճամբուն վրայ ծովեզերեայ տուն մը փոխադրած էր իր բնակութիւնը եւ 80 ոսկիի գումար մը ծախսելով քիչ շատ կտհառած էր զայն: Այս կա-

հաւորման հսկողութիւնը ստանձնած էր Մաթոս աղան, որ ըստ խնդրանաց Աստիւր աղաի, մինչեւ հարանիքին կատարուիլը գիշերները հոն պիտի անցունէր: Չի մոռնանք ըսել թէ Աստիւր աղա իր քաղաքացիներուն խօսակցութեանը, կամ՝ աւելի ճիշդը՝ բաժնատէրին առարկայ չըլլալու համար Մաթոսին հետ որոշած էր անոնցմէ առ այժմ գաղտնի պահել իր այս ամուսնութիւնը:

Պատրիկի հետ եղած կարգադրութեան մը համաձայն, վարդափառի պահքին հինգշաբթի օրը որոշուած էր քէսէպիչէն ընել ուստի նոյն շաբթուան երկուշաբթի առտուն Աստիւր աղա, թէ՛ իրեն, թէ՛ Ղազիկին ու թէ՛ Դանիկին մէկ մէկ ձեռք հագուստ առնելու համար Մաթոս աղան հետ Ղալաթիոյ կողմը պատրաստ հագուստներու մեծ վաճառատուն մը կը մտնէր: Սոյն վաճառատան դրան երկու կողմի հագուած սգուած փայտէ երեք տրձանները ողջ կարծելով, զանոնք յարգանքով գետնէն բարեւեց ու շտապաւ սանձուղէն վեր ելնելով, անոր գլուխը գրուած մեծ հայելիին զարկաւ ինքզինքը, որ բարեբախտաբար չի կոտրեցաւ: Վաճառատան պաշտօնեաները Աստիւր աղաի այս շարժումէն չի կրնալով իցըղիներին բռնել, սկսեր էին բարձրաձայն ծիծաղիլ:

Վերջապէս Ակնցին վերի սրահին մէջ դրուած աթոռներէն մէկուն վրայ նստեցաւ, որուն հետեւեցաւ նաեւ Մաթոս աղա:

Վաճառատան պաշտօնեաներէն մին ձերբերը շփելով անոնց մօտեցաւ եւ հարցուց.

— Չօճուգլարը մը կի յինտիրէճէիդ:

— Հէմ օնլարը հէմ պէնի:

— Տէմէք՝ չօճուգլարա պիրէր գաթ մարնէլ...

— Ի՛շ կըսէ, աղա՛:

— Լաթ մ'առնել կըսէ:

— Աղէկ ըմմա պաշխա Լաթ մի չունին. չէօյլէ էհվէնճէ պիր շէյ օլսուն ալա՜ ճաղըլ:

— Բէք էյի, սիդ թամ գօստիլմ մի խթերսինիդ:

— Գօստին ի՞նչ տի տնիմ, էֆէնտըմ, ուռում պիչիմի բան չիմ ուզեր:

— Աղնատըմ, պիր բանթալոն, պիր չաքէթ, պիր տէ բէտէնկօթ, ըսելով պաշտօնեան հեռացաւ:

— Մաթոս պէկ, աստ էտէվէն կօթ ըսածը ի՞նչ տըլլի:

— Միամիտ էղիր, էֆէնտըմ, հէլպէթ տէ հըմայեկս տի բերէ ու տի տեսնինք:

— Ես կըսիմ ուր՝ սանկ բալթօ—սախօ մի ըլլայ իսէ՛ իմ գործս կու տեսնէ. խաբառօյի մայնին թէսլիմ տանեղնուս վաւթալով միւճէտտէտէն առած թախըմ մի ուրուպաներս հալէա՝ տուամնովը դրած է, էրկրէն հետս բերած նոր ֆէսս ալ սնտուկիս մէջն է, ուզուն չարսուէն իբիլիկի մը փատէ խալիպ մի կառնինք, կը թըջինք վրան կու կոխինք ու գլուխնիս կանցունինք:

Այս միջոցին պաշտօնեան թէ տղոցը և թէ Աստիւր աղային համար մէկ քանի ձեռք հագուստներ բերեր էր: Գանիկին ու Ղապիկին մէյմէկ ձեռք հագուստ, Աստիւր աղայի համար ալ երկայն բալթօ մը առնուեցաւ, որոց փոխարէն 450 դրըն վճարուեցաւ մէկ ժամ տեւած սակարկութենէ մը ետքը:

Նոյն շաբաթուան հինգշաբթի օրը քէսէպիչէի գործողութիւնը կը կատարուէր: Պատրիկ, որ աղջիկան կողմը կը ներկայացնէր, ՚ի գիմաց տիկին Միհրանի առաջարկեց որ հարսնիքը Պոյաճի գիւղ կատարուի, ու մէկ շաբաթ հոն անցունելնէն ետքը երթան հաստատուին ՚ի Գուրու-չէշմէ: Այս առաջարկը Աստիւր աղային շատ գործին եկաւ, ըստ որում հարսնիքի ծախքէն պիտի ազատէր և այս ալ մեծ բան մըն էր իրեն պէս կծծիի մը համար, չի գիտնալով սակայն թէ այդ առաջարկը ընդունելուն մէջ կը կայանար իր խաբուիլը: Հետեւաբար որոշուեցաւ որ վարդափառի գիմացի կիրակին Միհրան աղայի տաներէցը Գուրու-չէշմէ Աստիւր աղայի տունը երթայ—գաւառացի ըլլալուն՝ տաներէց չուներ—եւ փեսին ու կնքահայրին հետ իրիկուան վերջին շոգենաւով Պոյաճի

գիւղ հասնին. իսկ Ղապիկ և Գանիկ նոյն մէկ շաբթուան միջոցին Գուրու-չէշմէի տունը պիտի մնային կնքահայր Մաթոս աղայի հետ, որ հարսնիքին երկուշաբթի առտուն ըստ սովորութեան պիտի մեկնէր հարսնքի տունէն: (Շար.)



ԱՆԱՆՈՒՆ ՆՊԱՍՏՆԵՐ

Այս հինգշաբթի օրը Բոթոժիկ հեւալով խմբագրատուն մտաւ ու թիկնաթուռի մը վրայ նետուեցաւ խիտ յոգնած վիճակի մէջ:

— Խեր ըլլայ Բոթոժիկ, ո՛ւսկից կուգաս այսպէս յոգնած:

— Հնչակապատէն, Գրոշակապատէն ու Մարտապատէն:

— Ագ ո՞րչափ պատերու վրայէ ցատկեր ես ի՞նչ կը նշանակեն այդ անունները:

— Ձե՞ս գիտեր, ասոնք մեր հայրենիքի ապագայ մայրաքաղաքներն են:

— Մայրաքաղաքները մի՞ քանի՞ մայրաքաղաք պիտի ունենայ հայրենիքը:

— Հիմալու հիմա քուէտուփէն այս երեք անունները ելա՛ւ, թէ ե կըսուի թէ Տաւրոսապատ մը և Շարժուապատ մ՛ալ կայ ծրագրին մէջ:

— Այն ատեն հի՛նգ մայրաքաղաք պիտի ունենայ հայրենիքը:

— Ոչ, ո՛վ որ առաջ կարենայ իր

ծրագիրը դործագրել, ան պիտի խլէ առաջնութեան դարձին:

— Ի՞նչ ու խելառ իս սքեհ կընես իւր այսօր Բոժոժիկ:

— Ամենեւին, ա՛նք իմ. պատրաստ եմ՝ բաժնեւր հաստատելու. Այս ապա-
գայ մայրաքաղաքոյ շինութեան ծախ-
քերը մասամբ պիտի հոգացուին, տուա-
ջինինը անցեալ շաբաթ գիշեր Վառնայի
թատրոնին մէջ տրուած «Երկու Յիսնա-
պետք» անուն ներկայացումին հասոյ-
թովը:

— Այ, այդ ներկայացումը նա-
ղարքեկեանց համար էր:

— Ըստ տոմսակալաճառի յայտու-
րութեան, անանկ է եղեր:

— Է՛, շարունակէ՛:

— Երեքշաբթի իրիկուն տրուած
դոնէրն ալ երկրորդ մայաքաղաքին
համար էր:

— Ի՛նչ կըսես...

— Իսկ գալ շաբթու տրուելիք
«տուա՛ն տանտան»ին հասոյթն ալ հար-
կա երրորդին համար պիտի ըլլայ:

— Ինչէ՛ն գիտես...

— Անանկ ըսին.

— Ամեն ըստածներու կարեւորու-
թիւն տալու չէ՞ Պ. Բոժոժիկ. քանի որ
ազգարարութեան մէջ բացորոշապէս
դրուած չէ, չենք կրնար վճռել թէ այն
ինչին համար է:

— Առաջիններուն ալ դրուած չէր
ամա, ետքէն հաստատուեցաւ անոնց
համար ըլլալը:

— Բայց ինչո՛ւ այդ մարմինները
ի նպատի իրենց ըլլալը կը ծածկեն
ժողովուրդէն:


— Անոնց հարցունես նէ՛ անակն-
կալ մը ըրած ըլլալու միտքով է կըսեն,
բայց թէ որ ինծի հարցունես՝ պարզա-
պէս երես չունենալնուն համար է կը-
սեմ:



ԿԱԼՎԱՆԻՍԹ

Ամեն տեսակ
տպագրական կա-

ղապարներ պատրաստող, նաեւ
անձնական և թէ՛ առևտրական կնիքներ:
Սոյն կնիքները որ ըստ վերջին դրութեան
պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երե-
ցած քառւորէ կնիքներէ աւելի դիմացկուն են
և դիւրութեամբ կը տպագրուին. գինն ալ
քառւորէ գինէն տարբերութիւն չունի: Քա-
ղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով
կը կատարուին: Դիմել ի Վառնա շիլինկեր-
էր փողոց թիւ 561: Գին գոհացուցիչ:



ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆՐԱՊԵՏ

Յանձնարարութիւնք փութով կը կատարուին

Վարկենական Տպագրութիւն

Ա Յ Յ Ե Տ Ո Մ Ս Ի

100 հատը 2 ֆր. ի կը տպագրուի և ա-
նոր տուփին մէջ կը գտնուի Այցետունի գոր-
ծածուծեան հրահանգը պարունակոր տէտրա-
մը, որուն կողքին վրայ այցետունին տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբա-
գրութեանս: Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանդիմ-
յաւանարարողին վրայ է: Դրամի փոխարէն
Պուլկարական 5, 10 և 15 սանդիմնոց նա-
մակագրոջմ' կ'ընդունուի: Կանխիկ:

ՔԱՇԱՐԱՆ ԸՐԱԳԱՆՈՒ

Սոյն ճաշարանը այս անգամ Տիար Գեորգ
Փափաղեանի անօրէնութեանը յանձնուած է,
ուր ըստ առաջնոյն կը գտնուին համադամ
կերակուրներ: Պատուարժան յաճախորդք
խիստ գոհ պիտի մնան թէ կերակուրներէն և
թէ գիներու անմըցելի աժանութենէն:

ԷՐԲԷՅԻՆ ՖԷՆՏԻ

ԳԱՐԸՅԸ ԵՒՆՏԻ

Կը կէճէլէրինէ մախսուս զայէթ կիւ-
լինճը վէ էյլէնճէլի իշպու գոմէտի 32 սա-
հիֆէտէն իպարէթ օլուպ, հրուֆաթը էրմէ-
նիճէ վէ լիսանը թիւրքճէ օլարազ Վարնատա
թիւթիւնճիւ տիւքքեանյարընտա 30 սանթիմ
ֆիաթլէ սաթըլմադտա սըր: Թաշրալարտան
իսթէյէնլէր հալընըզ 30 սանթիմլիք բոթա
բուլը զիրտէ մուհարրէր նամընա կէօնաէր-
մէլի տիրէր:

Մ. ԽԱՉԻԿԵԱՆ, 2 հճի Ուլաթ, 1104

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Պաշտան պէտքէ սաիր էյլէնճէլի վէ ֆա-
խէլի գոմէտիլէր տախի բէյրէրքէյ նէշը օ-
լուհաճաղը պէյան օլուներր:

Отговоренъ-редакторъ: Н. Драгулев

Печатница „Взаимность“—Варна

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՏՈՒՆ

Ա. . Զարպհանէլեան

ՎԱՌՆԱ

Կը վաճառէ Պուլիսի, Թիֆլիսի և
Վիէննայի մէջ հրատարակուած հայերէն
զպրոցական և պատմական զիրքեր,
գնումն և վաճառումն ամեն տեսակ
նամակադրոյմերու: Նաև զպրոցական
պիտոյքներ: Քաղաքներէ եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին
4



Գ. ԿԻՇԼԿԻ

Ա. Գ. Ա. Գ. Ս. Ի

Կամ Զուարճալի Բաղդադցոյ
Ընտանեկան

Երկուս ամէն հասակի ընթերցողոց զը-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով
զիմել մեր խմբագրութեան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԳԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏԱ

ՓՈԲԵՐԵՅ ՏՂԱՅՈՅ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առա-
ջինն է որ ըստ կը տեսնէ հայերէն ընդունլ,
կը պարունակէ մանկական զուարճալի երգեր
ու քանի մը ոտանաւոր առակներ և կրնայ
երախայներուն ծառայել նաև իբր ընթեր-
ցանութեան զիրք որուն պարունակութիւնը
երօնեցուցիչ և հրահանգիչ է միանգամայն
անունը համար:

Թուղթը ընտիր է, տպագրութիւնը՝ մա-
քուր և կազմը վայելուչ:

Գին 80 ՍԱՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արևելեան տպարան,

Զրդ. թաղ, թիւ 1104: